լափոխւում է եւ ոսկէ թեւեր տալիս իր ապրելու բնական պահանջին: Կեանքը չի կարելի ընդօրինակել, չի կարելի դրսից առած օրէնքներին ենթարկել, այլ միայն բարեխոսել: Բարեփոխութիւնները առաջ են գալիս ապրելու մեծ ցանկութիւնից եւ ոչ զղջումից կամ այն ճիգից, որ մենք անում ենք որոշ, նախապէս հաստատուած սկզբունքներին յարմարուելու համար:

Եթէ Սարդարապատը պառկած է տխուր ու տրտում, բայց լի ահագին կարելիութիւններով, դէմը, արեւի նման, վեհօրէն ցցուել է հոյակապ Արարատը, ոչ մի նիւթական կարելիութիւններով լի:

Ու այս բաց աւետարանի մէջ պէտք է սովորիլ կարդալ:

Բնութեան ամէն մի երեւոյթը խորհրդանշան է: Այս վայրերը մեր երակների մէջ արիւն են ու մեր հոգու հետ մարմին:

Այստեղ, մենք վերադառնում ենք դէպի մեզ:

Հայ կեանքի համար, այսօր, ինչպէս երէկ, Սարդարապատը փորձութեան դժուարին դաշտն է, Արարատը՝ լուսաւորող գաղափարը:

Երբ հայ ժողովուրդը խոր այդ գիտակցութեան հասնի, նա կը գտնի իր ճանապարհը: Նա այլեւս մուրացկանի աչքերով ուրիշների նայուածքները չի փնտռի եւ ֆօրդը կը վերադառնայ իր տունը, որովհետեւ...ո՞ւր տեսնուած է, որ ագռաւները արծիւներին թռչել սովորեցնեն:

ՄՂՁԱՒԱՆՋ

Փոքրիկ սենեակը, ուր տեղաւորուել ենք, նեղ է, մութ եւ կեղտոտ: Ոչ մի կահկարասի, ոչ իսկ մի աթոռ: Սնտուկները շարել ենք եւ վրան պառկում: Նոյն սենեակի մէջ կերակուր ենք պատրաստում, աշխատում, եւ հինգ հոգի պառկում:

Սենեակի առջեւ, բակի կողմից, նեղ պատշգամ կայ, բայց չենք կարողանում օգտուել, նախ, որովհետեւ ցուրտ է եւ երկրորդ՝ բակից այնպիսի դարշահոտութիւն է գալիս, որ անկարելի է շնչել:

Տունը բաւականին մեծ է: Բակի պատշգամը փայտէ պատերով բաժանուած է, եւ ամէն բաժանումի մէջ մի քանի ընտանիքներ են ապրում: Մեր սենեակի դիմաց ապրում են մի երիտասարդ կին եւ իր ամուսինը: Կինը պաշտօնեայ է, չգիտեմ, ո՞ր պետական հիմնարկութեան մէջ: Առաւօտից գործի է գնում, վերադառնում է ճաշին եւ նորից մեկնում: Ամուսինը անգործ է: Ապուրը դնում է կրակի վրայ, միսը եւ սոխը մաքրում, պառկում է անկողնի վրայ ու անդադար ծխում: Բարակ կանացի ձայն ունի, միշտ մտահոգ ժպտում է, երբեք չի զարմանում, ինչ էլ պատահի: Ծխում է, ծխում է...

Բովի սենեակում ապրում է մի ընտանիք: Հասակը առած մի կին եւ երկու աղջիկներ: Ամուսինը աքսորուած է կամ փախել է Ռումանիա, լաւ չհասկացայ: Աղջիկները դպրոց են գնում, իսկ մայրը օրերով անհետանում է, ո՞ւր է գնում, յայտնի չէ: Երբեմն դպրոցական տղաքներ են գալիս, ուրիշ աղջիկներ եւս: Ահագին աղմուկ են հանում: Ասում են, դաս ենք սովորում:

Այս հարեւանների սենեակից իր սենեակն է անցնում ուրիշ մի հարեւանուհի: Բարձրահասակ, երեսուն տարեկանի մօտ մի կին: Տղամարդու ձեւեր ունի, հաստ ձայն եւ փութկոտ շարժումներ: Ասում են՝ հիւանդասպահուհի է: Գիշերը վերադառնում է ժամը իններ մօտերը եւ էլ դուրս չի գալիս: Ցաճախ, ստուերի նման, աննշմարելի մէկը գալիս նրա դուռը ծեծում է եւ ներս մտնում:

Վարը, առաջին յարկում, ապրում է բազմաթիւ մի ընտանիք: Ամէն բան դուրսն են անում: Կերակուր եփում, փայտ կտրում, շոր լուանում: Չգիտեմ՝ ո՞ր տեղից եկած գաղթականներ են: Ընտանիքը վարում է պառաւ մի կին, չարչարուած, խիստ դէմքով եւ խռպոտ ձայնով ահռելի այն պառաւներից մէկը, որ միայն Արեւելքում կարելի է հանդիպել: Բոլոր տնեցիների հետ կռուել է: Ամէն մարդ վախում է նրանից: Վարը, խոնաւ, գրեթէ գետնափոր խուցերում, այդ մարդիկը ապրում են աղտի եւ աղրի մէջ, վերի յարկի կոտրտած պատշգամը եւ լայն պատուհանները տեսնում եւ նախանձում: Գտնում են, որ իրենք զրկուածներ են, որ «աշխատաւոր» իշխանութիւնը անարդարութիւն է գործում, որ վերը ապրող հարուստները՝ հարուստները մենք ենք՝ իրենց արդար իրաւունքից զրկում են:

Հայ մատենագրության թուանշանային գրադարան